ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/68

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.06.2018թ. թիվ 03/26-3/9860-18 գրությամբ «Յասոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 29.05.2018թ. թիվ ԴՎԱ/1896 գրության հիման վրա, 01.06.2018թ. «Յասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.05.2018թ. թիվ ԴՎԱ/1896 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման մրցույթում «Յասոն» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Հայտերի բացման նիստի ավարտից հետո սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վեաբերյալ: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 115.491 ՀՀ դրամ: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 44-րդ կետը, որոշեց «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Յասոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Յասոն» ՍՊԸ-ն 27.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Յասոն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 07.04.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) որոշել է 07.05.2017թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե) պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը, Կոմիտեի կողմից 14.05.2018թ. տրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը ունի 115.491 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալով պայմանավորված «Յասոն» ՍՊԸ-ն դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 07.04.2018թ. (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, համոզվելու համար, թե 07.04.2018թ. ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունները ինչքան են կազմել, և արդյո՞ք վճարված գումարը լիովին բավարարել է վերը նշված օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունները մարված համարելու համար:

Ի պատասխան վերոգրյալ գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից «Յասոն» ՍՊԸ-ին 15.06.2018թ. տրվել է թիվ 2002 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 07.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է հարկային պարտավորություններ.

- Տուգանքներ և վնասի հատուցման գումար՝ 115 491 ՀՀ դրամի չափով:
- Դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով՝ 1 154 072 ՀՀ դրամ չափով:

Վերը նշված տուգանքների և վնասի հատուցման գումարը առաջացել է Կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության հարկային պարտավորությունների

առաջացման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ 01.02.2018թ. կազմված թիվ 1501457 վարչական ակտով (այսուհետ նաև՝ ակտ), որի համաձայն Ընկերությունը տուգանվել է 314.600 ՀՀ դրամի չափով՝ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի 10-ին կետի:

Նույն որոշման համաձայն՝ առաջադրված գումարը ենթակա է վճարման սույն ակտը ներկայացնելու հետո 10-օրյա ժամկետում:

Ակտը «Յասոն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Խուրշուդյանը ստացել է 01.02.2018թ: Ակտը ստանալուց հետո, «Յասոն» ՍՊԸ-ն սպասարկող բանկի՝ «Արարատբանկ» ԲԲԸ-ի Պուշկինի 19 հասցեում գտնվող մասնաճյուղում 07.02.2018թ. թիվ 32 և 33 վճարման հանձնարարականներով (ակտով սահմանված 10-օրյա ժամկետում) 90008000490 գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 283.140 և 31.460 ՀՀ դրամի (ընդամենը՝ 314.600) վճարում, նպատակը՝ թիվ 1501457 տուգանք (ակտ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրության ենթարկելով 07.02.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Արարատբանկ» ԲԲԸ-ի թիվ 32 և 33 վճարման հանձնարարականները, որոնց միջոցով

«Յասոն» ՍՊԸ-ի կողմից կատարվել է հարկային պարտավորությունների՝ տուգանքի մարումը, ընդհանուր առմամբ 314.600 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև դրանք համադրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 15.06.2018թ. տրված թիվ 2002 տեղեկանքի հետ, գտնում ենք, որ «Յասոն» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն, քանի որ գնման հայտը ներկայացնելուց առաջ որպես բարեխիղճ հարկատու կատարել է օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները՝ ունենալով նաև դեբետային մնացորդ, և համոզված լինելով հարկային պարտավորությունները ժամանակին կատարված լինելու փաստի մեջ, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին: Տվյալ պարագայում Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը պայմանավորված չի եղել «Յասոն» ՍՊԸ-ի կողմից դրսևորված վարքագծով, ինչի պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ստանձնած պարտավորությա խախտման փաստը:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Յասոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.06.2018թ. թիվ 03/26-3/9860-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.05.2018թ. թիվ ԴՎԱ/1896 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 18.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից

ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.05.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Յասոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 09.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 85-րդ, 86-րդ, 87-րդ, 89-րդ, և 92-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Յասոն» ՍՊԸ-ին:
- 4.3 կետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.05.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «Յասոն» ՍՊԸ-ն ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 115.491 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 18.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով որոշել է մերժել «Յասոն» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.04.2018թ.) ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen

Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն սույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Յասոն» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (07.04.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 115.491 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված

գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նկատի ունենալով, որ «Յասոն» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված

գործողություններն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Յասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.06.2018թ. թիվ 03/26-3/9860-18 գրությամբ «Յասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Յասոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**